«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 19-Ի N 596-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« »_____ 2024 թվականի N ___ - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 19-Ի N 596-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Քաղաքաշինության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 596-Ն որոշման.

1) Հավելված N1-ի 27-րդ կետի և Հավելված N4-ի Ցանկ N1-ի 1-ին, 2-րդ, 5-րդ կետերի <ներքին հարդարման,> բառերից հետո լրացնել <բնակելի, հասարակական և արտադրական նշանակության շենքերում բջջային կապի բազային կայանների տեղադրման, նորոգման, արդիականացման (բացառությամբ ՀՀ կառավարության 2024 թվականի մայիսի 2-ի N638-Ն որոշմամբ նախատեսված դեպքերի)> բառերը,

2) Հավելված N4-ի Ցանկ N1-ի 7-րդ կետի 12-րդ ենթակետը լրացնել նոր՝ <ը.> պարբերությամբ, հետևյալ բովանդակությամբ. <(*)ը. բնակելի, հասարակական և արտադրական նշանակության շենքերում բջջային կապի

բազային կայանների տեղադրում, նորոգում, արդիականացում (բացառությամբ ՀՀ կառավարության 2024 թվականի մայիսի 2-ի N638-Ն որոշմամբ նախատեսված դեպքերի)։>

3) Հավելված N4-ի Ցանկ N3-ի 4-րդ կետի 3-րդ ենթակետը լրացնել նոր՝ <է.> պարբերությամբ, հետևյալ բովանդակությամբ. <է. ՀՀ կառավարության 2024 թվականի մայիսի 2-ի N638-Ն որոշման հավելվածով սահմանված օբյեկտները։>,

4) Հավելված N4-ի Ցանկ N2-ի 3-րդ կետի 1-ին ենթակետի <գ.> պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ <գ. առևտրի, հանրային սննդի և կենցաղային սպասարկման շենքերն ու շինությունները (այդ թվում՝ էլեկտրամոբիլների լիցքավորման վերգետնյա կայանները/տերմինալները՝ երեքը չգերազանցող քանակով), բացառությամբ՝ բենզալցակայանների և գազալցակայանների>,

5) Հավելված N4-ի Ցանկ N3-ի 4-րդ կետի 1-ին ենթակետը լրացնել նոր՝ <իե.> պարբերությամբ, հետևյալ բովանդակությամբ. <իե. էլեկտրամոբիլների լիցքավորման ստորգետնյա կայաններ/տերմինալներ։>,

6) Հավելված N1-ի 4-րդ կետի 19-րդ ենթակետի <հարցման հիման վրա> բառերից հետո լրացնել <,ընդ որում, ՀՀ պետական և համայնքային միջոցների հաշվին իրականացվող շինարարական ծրագրերի տեխնիկական պայմանների ձեքբերումը մինչնախագծային փուլում իրականացվում է բացառապես ծրագրերի պատվիրատու հանդիսացող պետական և համայնքային մարմինների կողմից.> բառերով։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից։